

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՎԱՅՐԵՐԻ ԵՎ ՏԱՃԱՐՆԵՐԻ
ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄԸ

Վարդուհայան Գ. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)
gohar.vardumyan@gmail.com

Բանալի բառեր՝ հեթանոսություն, հավատալիքներ, պաշտամունք, տաճար, դիցարան, քարտեզ, հոգևոր մշակույթ:

Հայոց նախաքրիստոնեական հավատքը հազարամյակների պատմություն ունի և ներկայանում է իր տարաբնույթ դրսևորումներով, որոնցից են հին հավատալիքներն ու դիցարանը՝ համապատասխան պաշտամունքային վայրերով ու տաճարներով: Մեր կողմից կազմվել է չորս քարտեզ, որոնք ժամանակագրորեն ընդգրկում են հեթանոսությունն իր զարգացման փուլերով՝ վաղնջական շրջանից սկսած մինչև քրիստոնեության ընդունումը: Դրանք արտացոլում են հին հավատքը՝ հնագույն բնապաշտական պատկերացումներից մինչև դիցարանի տարբեր փուլերի աստվածների պաշտամունքը: Տեղեկությունները քաղված են խեթական, ուրարտական, անտիկ հունահռոմեական և միջնադարյան հայկական աղբյուրներից, հայ ժողովրդական բանահյուսությունից, ինչպես նաև՝ մեր դաշտային ազգագրական նյութերից:

ա/ Առաջին քարտեզը, որ կոչվում է «Центры культов дохристианских божеств в исторической Армении», տեղ է գտել 1991 թ. լույս տեսած «Дохристианские культы армян» մենագրության մեջ՝ «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 18-րդ պրակում: Քարտեզը ուսերեն է, դրանում տեղորոշված են հայոց հին հավատքի տարբեր փուլերի պաշտամունքային կոթողները և հեթանոսական դիցարանի աստված-աստվածուհիների սրբավայրերը, տաճարները, բազիլիկները, մեհյանները՝ ըստ դիցարանի զարգացման փուլերի:

բ/ Երկրորդ քարտեզը՝ «Հայաստանի հեթանոսական հավատալիքները», առայժմ անտիպ է: Այն արտացոլում է հայոց հնագույն պատկերացումները և դրանց հետ կապված բնապաշտական հավատալիքները՝ ներառելով լեռների ու անձավների, բույսերի ու կենդանիների պաշտամունքը: Քարտեզում տեղ են գտել նաև վիշապ-քարակոթողները, պաշտամունքային բովանդակությամբ ժայռապատկերները, մարդու և բնության ստեղծած այլևայլ սրբություններն ու սրբատեղիները:

գ/ Երրորդ քարտեզը՝ «Հեթանոսական կրոն. դիցարաններ», որը նույնպես առայժմ անտիպ է, դարձյալ ներկայացնում է հայոց հեթանոսական դիցարանը՝ այս անգամ հայերեն, որոշ հավելումներով ու ճշգրտումներով՝ համեմատած ռուսերեն քարտեզի հետ: Քարտեզի բնույթը տարբեր է ռուսերեն համանման քարտեզից: Այս քարտեզը, ինչպես և նախորդները, կարիք ունի թվայնացման և ժամանակակից քարտեզագրման մակարդակին համապատասխանեցման:

դ/ Չորրորդ քարտեզը՝ «Principales centros de culto de Armenie», լույս է տեսել 2010 թ.՝ հայ ժողովրդի պատմությունը ներկայացնող իսպաներեն մենագրության մեջ՝ հայոց հեթանոսության վերաբերյալ մեր հեղինակած նյութի շրջանակներում: Քարտեզն իսպաներեն է, ընդգրկում է նախորդ քարտեզների հիմնական նյութը, բացի հավատալիքներից: Այն արված է թվայնացման արդի եղանակներով:

Այս քարտեզները հին հայոց պաշտամունքը ներկայացնող միակ փորձն են: Դրանք հիմք են հանդիսանալու հետագա՝ առավել կատարելագործված թվայնացված քարտեզների համար: Եղած հետազոտական նյութը լրացուցիչ զգալի տվյալների հնարավորություններ է ընձեռում, որոնք ներկայացված քարտեզներում տեղ չեն գտել նյութի առատության և մի քարտեզում այն գետեղելու անհնարինության պատճառով: Հայոց հեթանոսության ժամանակակից եղանակներով քարտեզագրումն անհրաժեշտ է հոգևոր մշակույթի, դրա պատմության և բաղկացուցիչ տարրերի ապագա ուսումնասիրման, տարածական ու

Ժամանակային կտրվածքներով այն ամբողջականորեն ցույց տալու
համար:

THE MAPPING OF ANCIENT ARMENIAN PLACES AND TEMPLES OF CULT
Vardumyan G. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of
History, Armenia)